ՎԵՐԱՊԱՏՐԱՍՏՄԱՆ ՀԵՌԱՎԱՐ ԴԱՍԸՆԹԱՑ «ԺԱՌԱՆԳՈՒԹՅԱՆ ԻՆՍՏԻՏՈՒՏ» ԹԵՄԱՅՈՎ

29.07.2020 17:55

Հարգելի՛ փաստաբաններ,

31.07.2020թ. ժամը 18:30-20:30-ն ՀՀ փաստաբանների պալատը կազմակերպելու է հեռավար դասընթաց **«Ժառանգության ինստիտուտ»** թեմայով:

- Դասընթացը կվարի նոտար Գուրգեն Գյուլնազարյանը:

- Դասընթացին կարող եք միանալ Ձեր գտնվելու վայրից:

- Դասընթացին մասնակցելու համար անհրաժեշտ է գրանցվել՝ մինչև 30.07.2020թ. ժամը 18:00-ն՝ պատասխան նամակ ուղարկելով ani.gharibyan@advocates.am էլեկտրոնային փոստի հասցեին, որտեղ անհրաժեշտ է նշել Ձեր անունը, ազգանունը և արտոնագրի համարը:

- Դասընթացին նախապես գրանցված փաստաբանների էլեկտրոնային փոստի հասցեին կուղարկվի հրավեր, որն ակտիվացնելով կմիանաք դասընթացի հարթակին:

- Դասընթացին մասնակցությունը կհաշվարկվի պարտադիր վերապատրաստման 4 (չորս) ակադեմիական ժամ:

Տեղեկացնում ենք նաև, որ դասընթացի հրավերը կստանաք «Zoom» հարթակից, որին միաժամանակ կարող է միանալ մինչև 100 մասնակից, ուստի գրանցման առաջնահերթությունը տրվելու է առավել վաղ գրանցված 100 փաստաբանի:

Հետևապես, խնդրում ենք գրանցվել միայն այն դեպքում, եթե համոզված եք, որ դասընթացին մասնակցելու եք:

Նկատի ունենալով նաև այն հանգամանքը, որ նախորդիվ գրանցված մի շարք փաստաբաններ մուտք չեն գործել համակարգ, որի հետևանքով ավելի ուշ գրանցման հայտ ներկայացրած փաստաբանները հրավեր չեն ստացել և չեն կարողացել մուտք գործել համակարգ, ուստի բոլոր հայտ ներկայացրած փաստաբաններին համակարգ մուտք գործելու հրավերը կուղարկվի և նախատեսված ժամին համակարգ մուտք գործած 100 փաստաբանները հնարավորություն կունենան մասնակցելու դասընթացին:

Վերադառնալ $(window).load(function(){ if(typeof $(".fb_comments_count").html() != "undefined" && parseInt($(".fb_comments_count").html()) != 0){ updateCommentsCount(window.location.href); } })